**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

26.04.2021թ.
ժամը 15⁰⁰

Մասնակցում էին՝

**Գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի պետ Ա. Ասատրյան (ԳԱՊ),

ՀՀ ԶՈՒ ԲՀԱ վարչության ՄԾԺԱ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Կ. Ավագյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Է. Համբարձումյան:

Բացակայում է՝

ՀՀ ԶՈՒ ԲՀԱ վարչության ՄԾԺԱ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Օհանյան:

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի ավագ մասնագետ Ս.Եսոյան:

***«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

(Ս.Եսոյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Ս.Եսոյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/2» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | Աննա Սահակյան ԱՁ |
| 2 | «Արիմա գրուպ» ՍՊԸ |
| 3 | Արմեն Մանուկյան Սուրենի Ա/Ձ |

| | |
|---|---|
| 4 | «ԱՏԱ» ՍՊԸ |
| 5 | Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ |
| 6 | «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ |
| 7 | ՄԱՐԳԱՐԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳԻ Անհատ ձեռնարկատեր |
| 8 | «ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ |
| 9 | «ԷՄ ՔՅՈՒ ՖԵՅՇՆ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ |
| 10 | Ա/Ձ ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ |
| 11 | «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ |
| 12 | ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

---

(Ս.Եսոյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցներ էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Ա/Ձ «ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ»-ի կողմից ներկայացված հավելված 1.1-ում 6-րդ չափաբաժնի մասով փոքրը գավաթի համար առաջարկվել է 44-46 սմ բարձրություն, այնինչ պահանջվում է առնվազն 45սմ, միջին գավաթի համար առաջարկվել է 50-51 սմ բարձրություն, այնինչ պահանջվում է առնվազն 50 սմ, իսկ մեծ գավաթի համար առաջարկվել է 55-57 սմ բարձրություն, այնինչ պահանջվում է առնվազն 55 սմ: Քանի որ առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի հատկանիշները, բացառելով տարակերպ մեկնաբանությունը, անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը, որպեսզի գնահատող հանձնաժողովը հնարավորություն ունենա գնահատելու մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի համապատասխանությունը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 26.04.2021թ. որոշեց կասեցնել նիստը և առաջարկել վերոնշյալ մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: 28.04.2021թ. շարունակելով նիստը գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող շտկումները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

---

(Ս.Եսոյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/2» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկներ են ներկայացրել 12 մասնակիցներ.

| Հ/հ | Ապրանքի անվանումը | չ/մ | Քանակը | Նախահաշվ. գումարը | Մրցույթին մասնակցող կազմակերպությունների անվանումները | գնային առաջարկները առանց ԱԱՀ | ԱԱՀ | ընդհանուր գինը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | մեդալներ, կրծքանշաններ (Մեդալներ) | հատ | 300 | 360,000 | ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ | 300,000 | 60,000 | 360,000 | Բանակցություն |
| 2 | մեդալներ, կրծքանշաններ («Քաջարի մարտիկ» Կրծքանշան) | հատ | 1,000 | 1,000,000 | ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ | 800,000 | 160,000 | 960,000 | «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ |
| | | | | | «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ | 799,000 | 159,800 | 958,800 | |
| 3 | մեդալներ, կրծքանշաններ («Հայոց բանակի գերազանցիկ» Կրծքանշան) | հատ | 1,000 | 1,000,000 | ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ | 750,000 | 150,000 | 900,000 | «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ |
| | | | | | «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ | 724,000 | 144,800 | 868,800 | |
| 4 | մեդալներ, կրծքանշաններ («ՀՀ ԶՈՒ լավագույն զինվոր-մարզիկ» Կրծքանշան) | հատ | 1,000 | 1,000,000 | ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ | 780,000 | 156,000 | 936,000 | «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ |
| | | | | | «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ | 724,000 | 144,800 | 868,800 | |
| 5 | մեդալներ, կրծքանշաններ («Մարտական հերթապահություն» Կրծքանշան) | հատ | 2000 | 2,000,000 | ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ | 1,620,000 | 324,000 | 1,944,000 | ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ |
| | | | | | «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ | 1,658,000 | 331,600 | 1,989,600 | |
| 6 | Նվերներ և պարգևներ (Գավաթներ մեծ, միջին, փոքր) | հատ | 60 | 672,000 | Ա/Ձ ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ | 540,000 | 108,000 | 648,000 | Ա/Ձ «ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ» |
| | | | | | «ԱՏԱ» ՍՊԸ | 840,000 | | 840,000 | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | Նախմատ (Նախմատ-շաշկի) | լրակազմ | 340 | 1,530,000 | «ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ | 1,700,000 | | 1,700,000 | Բանակցություն |
| 8 | Պատի ժամացույցներ (Ժամացույց) | հատ | 300 | 930,000 | Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ | 897,000 | | 897,000 | Աննա Սահակյան ԱՁ |
| | | | | | Աննա Սահակյան ԱՁ | 885,000 | | 885,000 | |
| 9 | ՀՀ զինանշան (ՀՀ ԶՈՒ զինանշան) | հատ | 33 | 693,000 | «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ | 650,100 | | 650,100 | «Արիմա գրուպ» ՍՊԸ |
| | | | | | «ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ | 627,000 | | 627,000 | |
| | | | | | Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ | 610,500 | | 610,500 | |
| | | | | | «Արիմա գրուպ» ՍՊԸ | 560,000 | 112,000 | 672,000 | |
| | | | | | Աննա Սահակյան ԱՁ | 676,500 | | 676,500 | |
| 10 | Դրոշակաձող (Դրոշի ձող՝ տակդիրով) | հատ | 33 | 660,000 | «ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ | 825,000 | | 825,000 | «Արիմա գրուպ» ՍՊԸ |
| | | | | | Ամեն Մանուկյան Սուրենի Ա/Ձ | 594,000 | | 594,000 | |
| | | | | | «Արիմա գրուպ» ՍՊԸ | 530,000 | 106,000 | 636,000 | |
| 11 | Դրոշներ (ՀՀ պետական դրոշ) | հատ | 1,000 | 2,250,000 | «ԷՄ ՔՅՈՒ ՖԵՅՇՆ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ | 2,200,000 | | 2,200,000 | «Արիմա գրուպ» ՍՊԸ |
| | | | | | ՄԱՐԳԱՐԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳԻ Անհատ ձեռնարկատեր | 2,050,000 | | 2,050,000 | |
| | | | | | «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ | Սխալ գին | Սխալ գին | Սխալ գին | |
| | | | | | Ամեն Մանուկյան Սուրենի Ա/Ձ | 2,100,000 | | 2,100,000 | |
| | | | | | «Արիմա գրուպ» ՍՊԸ | 1,810,000 | 362,000 | 2,172,000 | |
| 12 | Դրոշներ (ՀՀ պետական դրոշ՝ ծոփքերով) | հատ | 33 | 264,000 | Ա/Ձ ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ | 211,200 | 42,240 | 253,440 | Ամեն Մանուկյան Սուրենի Ա/Ձ |
| | | | | | «ԷՄ ՔՅՈՒ ՖԵՅՇՆ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ | 257,400 | | 257,400 | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ՄԱՐԳԱՐԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳԻ Անհատ ձեռնարկատեր | 313,500 | | 313,500 | |
| | | | | | «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ | 215,600 | 43,120 | 258,720 | |
| | | | | | Ամեն Մանուկյան Սուրենի Ա/Ձ | 198,000 | | 198,000 | |
| | | | | | «Արիմա գրուպ» ՍՊԸ | 210,000 | 42,000 | 252,000 | |
| 13 | Խորհրդանշական նվերներ («Հուշանվեր՝ նարդի դեկորատիվ») | հատ | 10 | 320,000 | «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ | 288,000 | | 288,000 | «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ |
| | | | | | «ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ | 320,000 | | 320,000 | |
| | | | | | Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ | 290,000 | | 290,000 | |
| 14 | Խորհրդանշական նվերներ («Հուշանվեր՝ շախմատ դեկորատիվ») | հատ | 10 | 490,000 | «ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ | 627,000 | | 627,000 | «Գայանե Հակոբյան Գևորգի» Ա/Ձ |
| | | | | | Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ | 480,000 | | 480,000 | |
| 15 | Խորհրդանշական նվերներ («Հուշանվեր ժամացույց ՝ ՀՀ ԶՈՒ զինանշան (փայտե)») | հատ | 20 | 500,000 | «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ | 434,000 | | 434,000 | «Գայանե Հակոբյան Գևորգի» Ա/Ձ |
| | | | | | «ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ | 498,000 | | 498,000 | |
| | | | | | Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ | 430,000 | | 430,000 | |
| | | | | | «Արիմա գրուպ» ՍՊԸ | 488,000 | 97,600 | 585,600 | |
| 16 | Տեղեկատվական վահանակներ (Տեղեկատվության և ժամանցի սենյակների դիտողական քարոզչության նյութեր /չթափանցող ինքնակպչուն պաստառներ՝ մեծ, փոքր/) | հատ | 1,470 | 2,205,000 | «ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ | 2,200,000 | | 2,200,000 | «Գայանե Հակոբյան Գևորգի» Ա/Ձ |
| | | | | | Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ | 1,896,300 | | 1,896,300 | |
| 17 | Տեղեկատվական վահանակներ (Ազգային հերոսների տպագրված պաստառներ) | հատ | 374 | 561,000 | Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ | 467,500 | | 467,500 | Բանակցություն |

3.2 Աննա Սահակյան ԱՁ-ի, «Արիմա գրուպ» ՍՊԸ-ի, Ամեն Մանուկյան Սուրենի Ա/Ձ-ի, «ԱՏԱ» ՍՊԸ-ի, Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ-ի, ՄԱՐԳԱՐԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳԻ Անհատ ձեռնարկատիրոջ, «ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ-ի, «ԷՄ ՔՅՈՒ ՖԵՅՇՆ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ-ի, Ա/Ձ ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ-ի, «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի և ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ի գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/: Իսկ «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/, բացառությամբ 11-րդ չափաբաժնի, մասնավորապես՝ գնային առաջարկի Արժեք, ԱԱՀ և Ընդհանուր գին սյունակներում նշված գումարները սխալ են հաշվարկված: Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ի հայտը 11-րդ չափաբաժնի մասով, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի ե) պարբերության համաձայն:

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/2» ծածկագրով ընթացակարգի 1-ին, 7-րդ և 17-րդ չափաբաժիններին հայտ է ներկայացրել մեկ մասնակից, 7-րդ չափաբաժնի մասով առաջարկված գինը գերազանցում է պլանավորված նախահաշվային գինը, գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները 28.04.2021թ. որոշեց նիստը կասեցնել և գների նվազեցման նպատակով 03.05.2021թ. ժամը 14:15-ին ՀՀ ՊՆ ԳԿ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ: Նախատեսված բանակցություններին Մասնակիցները չներկայացան, ուստի վերջիններիս առաջարկված գները մնացին առանց փոփոխության:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

---

(Ս.Եսոյան)

4.1 06.05.2021թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում՝ 14-ից 17-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչվեց Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ-ն, 9-ից 11-րդ չափաբաժինների մասով՝ «Արիմա գրուպ» ՍՊԸ-ն, 2-ից 4-րդ չափաբաժինների մասով՝ «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ն, 1-ին և 5-րդ չափաբաժինների մասով՝ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ն , իսկ 6-րդ չափաբաժնի մասով՝ Ա/Ձ ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ-ն, 8-րդ չափաբաժնի մասով՝ Աննա Սահակյան ԱՁ-ն, 12-րդ չափաբաժնի մասով՝ Ամեն Մանուկյան Սուրենի Ա/Ձ-ն և 13-րդ չափաբաժնի մասով՝ «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ :

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.3 Քանի որ ներկայացված գինը 7-րդ չափաբաժնի մասով գերազանցում է գնումն իրականացնելու համար նախատեսված նախահաշվային գինը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին), գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը վերը նշված չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

Ի գիտություն՝ հայտերի գնահատման փուլում գնահատող հանձնաժողովից՝ Կ. Ավագյանը, դեմ էր քվեարկել Արմեն Մանուկյան Սուրենի Ա/Ձ-ի ներկայացրած հավելված 1.1-ին՝ 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով, առաջարկելով պահանջել Մասնակցից շտկում՝ կապված ներկայացված կտորների քաշերի հետ, մանրամասնելով, որ այդ քաշի կտորի դեպքում դրոշի գործվածքը ստացվում է ավելի նոսր ու արագամաշ: Սակայն կրկին ուսումնասիրելով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/2» ծածկագրով ընթացակարգի հրավերը, պարզ դարձավ, որ Մասնակցի ներկայացրած հայտի և «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի միջև հակասություն չկա, քանի որ վերոնշյալ հրավերով նման պահանջ չի դրվել: Ուստի Կ. Ավագյանը ևս կողմ քվեարկեց Արմեն Մանուկյան Սուրենի Ա/Ձ-ի ներկայացրած հայտի համապատասխանությանը սույն ընթացակարգի հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ**

(Ս.Եսոյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Ա. Ասատրյան

Գնահատող, Կ. Ավագյան

Գնահատող, Է. Համբարձումյան

Գնումները համակարգող՝ Ս. Եսոյան